ՀՀ փաստաբանական դպրոցի՝ 2016 թվականի աշնանային հոսքի ընդունելության
քննության հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Բաբայանին

Անուն_____

Հայրանուն _____ի

Ազգանուն_____ից

Էլ.հասցե[1]_____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցել ՀՀ փաստաբանական դպրոցի՝ 2016 թվականի աշնանային հոսքի ընդունելության քննությանը.

1. **առկա (ստացիոնար)** եղանակով ուսուցման **քրեաիրավական** կամ **քաղաքացիաիրավական (վարչաիրավական)** ուղղվածության[2] տեղի համար,

2. **հեռավար (դիստանցիոն, առցանց)** եղանակով ուսուցման **քրեաիրավական** կամ **քաղաքացիաիրավական (վարչաիրավական)** ուղղվածության[3] տեղի համար,

3. **հեռավար (առցանց)** եղանակով ուսուցման **քրեաիրավական** կամ **քաղաքացիաիրավական (վարչաիրավական)** ուղղվածության[4] տեղի համար՝ որպես ԼՂՀ դիմորդ[5],

4. **առկա (ստացիոնար)** եղանակով ուսուցման[6] տեղի համար՝ որպես **հատուկ դիմորդ**[7]՝
1) դատախազի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցող տեղի համար,
2) փաստաբանի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցող տեղի համար,
3) դատավորի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցող տեղի համար,
4) իրավաբանական գիտությունների թեկնածուի, իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող տեղի համար:

Պարտավորվում եմ ընդունելության քննության հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) պահանջով ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

Հավաստում եմ, որ համակարգչից օգտվելու իմ գիտելիքները բավարար են, մասնավորապես համակարգչի ստեղների, մկնիկի միջոցով մոնիտորի վրա նշված հրամանները կատարելու համար:

Ծանոթացել եմ «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրությանը, «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի ընդունելության քննության կարգին, «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու կարգին, ինչպես նաև ընդունելության քննության գործընթացի ժամանակացույցին:

Տեղեկացված եմ, որ ծանուցումները ստանալու եմ սույն դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեին, ընդունելության քննության ընթացքը (այդ թվում՝ համակարգիչները) տեսանկարահան-վելու և տեսաձայնագրվելու է, իսկ քննության ընթացքը առցանց (օնլայն (on-line)) հեռարձակվելու է, քննական սրահներում և դրան հարակից տարածքներում կարող է տեղադրված լինեն տեխնիկական միջոցների խլացուցիչ սարքեր:

---

[1] Անհրաժեշտ է գրել հստակ, առանց ջնջումների:
[2] Պատասխանը՝ առկա (ստացիոնար) կամ հեռավար (դիստանցիոն, առցանց), ինչպես նաև քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական (վարչաիրավական), անհրաժեշտ է վերցնել շրջանակի մեջ կամ ընդգծել բառի տակ:
[3] Տե՛ս նշում թիվ 3:
[4] Տե՛ս նշում թիվ 3:
[5] Լրացնում է միայն ԼՂՀ դիմորդը:
[6] Պատասխանը վերցնել շրջանակի մեջ կամ ընդգծել բառի տակ:
[7] Լրացնում է միայն հատուկ դիմորդը:

Նշե՛լ, եթե հատուկ (օժանդակ) հարմարությունների կարիք ունեք[8]:	
Այո	Ոչ
Եթե այո, ապա ի՞նչ բնույթի:	

Առկայության դեպքում նշե՛լ այն հիմքը, որը Ձեզ հնարավորություն է տալիս ազատվել ընդունելության քննության մասնակցության վճարից[9]:
✓ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ դիմորդ ✓ խնամքին անչափահաս երեխա ունեցող միայնակ ծնող ✓ 25 տարին չլրացած երկկողմանի ծնողազուրկ դիմորդ ✓ զոհված զինծառայողի (ազատամարտիկի) զավակ, պարտադիր ժամկետային ✓ զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայող ✓ ԼՂՀ դիմորդ ✓ դիմորդ, ով առնվազն 2 (երկու) անգամ անընդմեջ մասնակցել է ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննությանը՝ յուրաքանչյուր անգամ հաղթահարելով ընդունելության քննության նվազագույն շեմը

Դիմումին կից ներկայացնում եմ՝

- ✓ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- ✓ ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկը,
- ✓ 3 x 4 չափսի 3 (երեք) լուսանկար՝ գունավոր, վերջին վեց ամսվա վաղեմության,
- ✓ ընդունելության քննության մասնակցության վճարի (35000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ) **կամ** փաստաթղթերի ստուգման վճարի (20000 (քսան հազար) ՀՀ դրամ) անդորրագրի պատճենը,
- ✓ բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի պատճենը **կամ** բուհի կողմից տրված տեղեկանքը,
- ✓ հեռավար (առցանց, դիստանցիոն) ուսուցման դիմորդների դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքը, որը կհավաստի դիմորդի՝ վերջին մեկ տարին Երևան քաղաքից նվազագույնը 80 (ութսուն) կմ հեռավորության վրա փաստացի բնակվելու, այդ թվում՝ դիմելու պահին, հանգամանքը,
- ✓ առնվազն տասը տարվա փաստաբանի, դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը,
- ✓ իրավաբանական գիտությունների թեկնածուի **կամ** իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը,
- ✓ գիտական կազմակերպության կողմից հաստատված և հրապարակված գիտական աշխատությունների (հոդվածների) ցանկը,
- ✓ ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչման վերաբերյալ համապատասխան փաստաթղթի պատճենը,
- ✓ այլ փաստաթղթեր (նշե՛լ):
- ✓ _____
  _____
  _____

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը՝ ստուգելու ներկայացված փաստաթղթերի իսկությունը, ինչպես նաև ինձ վերաբերող տեղեկությունների հավաստիությունը:

_____ _____

(ստորագրություն) **(օր, ամիս, տարեթիվ)**

---

[8] Տե՛ս նշում թիվ 6:

[9] Տե՛ս նշում թիվ 6: